

## ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՎԻԳՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Հայերենում մի շարք մակբայներ, կապեր, շաղկապներ, վերաբերականներ\* ու ձայնարկություններ ցուցաբերում են իմաստային երկվություններ՝ հարելով նշված խոսքի մասերի իմաստային այս կամ այն տեսակին: Այս մասին գրվել է և՛ մենագրական ուսումնասիրություններում, և՛ դասագրքերում, և՛ առանձին հոգվածներում: Ընդամին, սույն հարցին լեզվաբաններն անդրադարձել են հատկապես մակբայի առիթով՝ նրա իմաստային դասակարգման մեջ առանձնացնելով ընդհանրական տեսակը ևս: Այսպես. Ա. Ղարիբյանը գրում է. «Վերջ ի վերջո, կրկին, նորից, հաճախ և նման մակբայները, իրենց հիմնական իմաստից բացի, կարող են ունենալ և այլ իմաստային առումներ. դրանք կարելի է կոչել ընդհանրական մակբայներ»<sup>1</sup>: Ա. Քյուրքչյանը մակբայների իմաստային դասակարգման մեջ տարբերակում է ընդհանրական տեսակը<sup>2</sup>՝ փաստացի հաստատելով այն միտքը, թե հայերենում մի շարք մակբայներ ցուցաբերում են իմաստային տարբեր նրբերանգներ՝ միայն որոշակի նախադասության մեջ արտահայտելով մակբայի իմաստային հիմնական տեսակին բնորոշ հատկություններ: Ընդհանրական մակբայներն ինքնուրույն տեսակ է համարում նաև Ս. Աբրահամյանը<sup>3</sup>, սակայն Մ. Ասատրյանը այդպիսի սեռակ չի առանձնացնում<sup>4</sup>: Ինչ վերաբերում է կապին<sup>5</sup>, շաղկապին<sup>6</sup> ու ձայնարկությանը, ապա դրանց նվիրված ուսումնասիրություններում իրավացիորեն խոսվում է նշված խոսքի մասերի իմաստային տարատեսակներում առկա այնպիսի բառերի մասին, որոնք ունեն իմաստային երկու, երեքմե էլ երեք տեսակին բնորոշ նրբերանգներ:

Սույն երևույթն առկա է նաև արդի հայերենի վերաբերականների մեջ: «Ընդհանրական եղանակավորող բառերը հանդես են գալիս իմաստային բազմազանություններով. նրանք կարող են հարել եղանակավորող բառերի թե՛ մեկ, թե՛ մյուս տեսակներին՝ ցուցաբերելով մե՛րթ մեկին, մե՛րթ մյուսին բնորոշ իմաստային հատկանիշներ»<sup>7</sup>: Այսպես. բա, բաւ, հա, էլի, չէ, այո, հո, խոսմ, խո (խոս), չլիքի (թե), իցե (թե), չիցե (թե), գուցե, միգուցե, ասեմք (թե), բեկուզ (և), ախր (ախար), արդ և այլ բառեր ցուցաբերում են իմաստային տար-

\* Մինչև վերջերս այս խոսքի մասը հայտնի էր եղանակավորող բառեր անվամբ: Այս տերմինն առաջարկել է Գ. Զահուկյանը (տե՛ս «Հայոց լեզվի և գրականության ծրագրեր IV—X դաս. համար», 1982, 1983):

1 Ա. Ղարիբյան, Հայոց լեզու, դասագիրք 5—7-րդ դաս. համար, Երևան, 1959, էջ 262:

2 Ա. Քյուրքչյան, Մակբայները հայերենում (թեկն. դիս. աշխատություն), Երևան, 1955, նույնի՝ Ընդհանրական մակբայները հայերենում («Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3—4):

3 Ս. Աբրահամյան, Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 276—279:

4 Մ. Ասատրյան, Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 227—252:

5 Ա. Մարգարյան, Արդի հայերենի կապերը, Երևան, 1955:

6 Գ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963:

Ս. Աբրահամյան, նշվ. աշխ.:

7 Վ. Ավագյան, Եղանակավորող բառերը և նրանց ուսուցումը, Երևան, 1975, էջ 41:

բեր նրբերանգներ, ուստի և համարվում են ընդհանրական վերաբերականներ։  
Հանգամանորեն անդրադառնանք այս բառերին։ Հայտնի է, որ հա-ն հաստատական իմաստ արտահայտող վերաբերական է, որը հիմնականում հանդես է գալիս որպես ինքնուրույն բառ-նախադասություն։ Հա-ն ավելի շատ ժողովրդախոսակցական երանգ ունի։ Բերենք օրինակներ, որտեղ հա-ն հաստատական իմաստ է արտահայտում.

— Հա՛, լի իմ, հայրիկ, դու հանգիստ գնա,  
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մնա (ՀԹԾ, 1, 149):

— Նոյի ագռավը չթողեց, որդի՛, Նոյի ագռավը:

— Նոյի ագռավը:

— Հա (ՄԾԺ, 4, 98):

Հա-ն, սակայն, ունի նաև հորդորական իմաստ, ինչպես՝

— Արի հա՛, Գիթոր ջան, արի հա՛, հասանք հա՛,— որդուն կանչելով գնում էր Համբոն... (ՀԹԾ, 1, 312):

Հա-ն երբեմն ցուցաբերում է հարցական-հաստատական իմաստ՝ զղջման, ափսոսանքի, հորդորի, զայրույթի նրբերանգներով։ Օրինակ՝

Դու օտար չես, չէ՞,

Բայց իմն էլ չես, հա՞ (ՊՍԾԺ, 6, 166):

— Ինձ հետ ես խոսում, հա՞ (ՀԹԾ, 1, 455):

— Ով միշտ ուժեղ է՝ նրան եմ հլու...

— Հա՞...,— գոռաց աղքատ ու սուրբ քաշեց (ՀՇԾ, 2, 187):

Հա վերաբերականը մասամբ գործածվում է շափի մակբայի իմաստով՝ փոխարինելով անընդհատ, շարունակ և նման այլ բառերին, ինչպես՝

Արագի՛լ, երբ գնացիր,

Դու մեղանից երբ գնացիր,

Հա՛ փչեցին բուք ու բորան,

Մաղիկները ամեն տարան (ՀԹԾ, 1, 167):

Հա՛ զարկեցին ու զարկեցին,

Տեսան տեղից ժաժ չի գալի... (ՀԹԾ, 1, 246):

Նշենք նաև, որ հա-ն հատկապես ընդգծված զգացմունքայնությամբ (նաև մի բան հիշելու առումով) խիստ մերձենում է ձայնարկությանը։ Այսպես. Մտիկ արա, հա՛, ձեռնաքաշություն չանես (ՀԹԾ, 1, 315): ...Հանկարծ քթուկը վեր գցեց ու՝ թու հա թու, թու հա թու, մառդի նման թքոտում է... (ՀԹԾ, 1, 335):

Այդ-ն հաստատական վերաբերական է։ Օրինակ՝

Գիտեմ՝

Ծս էլ եմ գնալու շուտով,

Ուր որ է, այդ՛, գնալու եմ ես,

Բայց չեմ կորչելու (ՊՍԾԺ, 6, 94):

Հաճախ գործածվում է ինքնուրույն՝ դառնալով հաստատական բառ-նախադասություն։ Օրինակ՝

— Գնացքն արդեն շարժվե՞ց:

— Այո՛:

Այդ-ն արտահայտում է նաև հորդորական վերաբերականի իմաստ՝ հարցական նրբերանգով։ Օրինակ՝

Մեքենայացված զոռցնելը քեզ

Մի՞թե ավելի քիչ են խանգարում,

Քան թե ես, այո՞ (ՊՍԾԺ, 6, 128):

Ի դեպ, այսպիսի դեպքերում սովորաբար հաջորդում է պատասխանական նախադասություն, ինչպես՝

— Դուք ինձ մի քիչ կօգնեք, այո՞:

— Խնդրեմ, ինչու չէ:

Զէ-ն ժխտական վերաբերական է (ինքնուրույն գործածությամբ դառնում է բառ-նախադասություն): Օրինակ՝

— Հր՞, չըլինի՞ թե բարկանում ես,— գլուխը վեր է քաշում ծառան:

— Զէ՛, ո՞վ է բարկանում, ես էն էի ասում, թե՛ մթնել է. տունն գնալու ժամանակն է (ՀԹԵ, 1, 153):

Զէ-ն հարցական երանգով ցուցաբերում է հաստատական և հորդորական նրբերանգներ ևս:

Քանի մահ կա իմ սրտում,

Քափուր գահ կա իմ սրտում.

Զէ՛ դու էլ ես մահացու.

Մահի ահ կա իմ սրտում (ՀԹԵ, 1, 149):

Այստեղ շէ-ն համարժեք է շէ ուր, իհարկե, անշուշտ և նման իմաստ արտահայտող բառերին: Կամ՝

— Խնշ պատահեց, ա՛յ գիժ քարեր,

Զէ՛ դուք ձեր տեղն անժաժ էիք (ՀԹԵ, 1, 256):

Իսկ հետևյալ օրինակում շէ-ն հորդորական իմաստ ունի, որտեղ առկա է հաստատական նրբերանգը. «Դու օտար չես, շէ» (ՊՍԵԺ, 6, 166):

Որ շէ -ն հաստատական իմաստ ունի, վկայում է երկխոսության պատասխանական նախադասությունը, որը սովորաբար արտահայտված է լինում այն, իհարկե, անշուշտ և նման ուրիշ բառերով: Օրինակ՝

— Արտակն արձակուրդից վերադարձել է, շէ՛:

— Այո՛:

— Անհատը քո քույրն է, շէ՛:

— Իհարկե:

Քիչ չեն դեպքերը, երբ շէ-ն հանդես է գալիս այդպես, այնպես և նման ցուցական դերանունների հետ, որոնք, սակայն, զրկվում են դերանվանական իրենց ուղղակի իմաստից, ցուցաբերում են ոճական երանգներ և սովորաբար լինում՝ են վերջադաս շարադասությունք: Ըստ որում, այդ ցուցականները շէ բառի զուգորդմամբ արտահայտում են հաստատական վերաբերմունք, ինչպես՝ «...Գարդմանա հզոր իշխանը յուր դուստրը տվել է լեռներում ապրող մի հովվի, այդպես շէ» (ՄԵ, գ. Բ, 34):

Բա-ն ու քա-ը հիմնականում կամային վերաբերականներ են: Օրինակ՝

— Բա ես որթնավեցի մի բարեկամ ունեմ, կճանաչե՞ս (ՀԹԵ, 1, 282):

— Բա ես որ հիմի գնամ՝ քեռեկնկանդ ի՞նչ ասեմ (ՀԹԵ, 1, 369):

Պատահում են դեպքեր, երբ քա-ն ու քա-ը միայնակ կամ հաստատական որևէ վերաբերականի հետ (իհարկե, ռեց շէ...) գործածվում են որպես հաստատական իմաստ արտահայտող բառ: Օրինակ՝

— Ապի, սրանք ժամ ունե՞ն...

— Ունեն, քա՛ւ, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնյա են (ՀԹԵ, 1, 315): Նշենք նաև, որ քա-ն ու քա-ը, ինչ իմաստ էլ արտահայտեն, գրական լեզվում խիստ սակավ գործածություն ունեն. դրանք գերազանցապես կիրառվում են ժողովրդախոսակցական լեզվում:

Խոմ բառը ևս լայն կիրառություն չունի: Նրանից ածանցված խո, հո, խու տարբերականները հիմնականում գործածվում են իբրև հարցական վերաբերականներ ԿՎրաց. Խոմ հարցական մասնիկ է՞՞՞, — գրում է Հ. Աճառյանը: Ս. Մախասյանը ևս այդ բառը համարում է վրացերենից փոխառյալ, որը հարցական մակբայ է (վերաբերական—Վ. Ա.)՝ աղղոբ, խո, հո՝ օգտագործվելով բացասական հարցերի ժամանակ. նշանակում է ախաբ, ապափեն և այլն՞՞՞, Բերենք օրինակներ հարցական իմաստով:

— Ահ չըկա խո ճամփեքին:

— Զէ, արխեին գնա. ո՞ւր եք գնալու (ՀԹԵ, 1, 282):

— Հո մեր տանիցը Օբմին չի՞ հիվանդացել:

8 Հ. Աճառյան, Գավառական բառարան, Երևան, 1913, էջ 481:

9 Ս. Մախասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944—45, էջ

— Զէ՛, էն ա ձեր Մաղիկ կոմը Միրզանց գոմի փլեկովը ներքև ընկավ, սատկեց (ՀԹԵ, 1, 326):

Ավելացնենք, որ այդ բառերը կարող են արտահայտել նաև հաստատական վերաբերմունք: Հաստատականությունն այստեղ համեմատաբար թույլ է, իսկ իմաստի որոշակիացմանը նպաստում է մասնավորապես խոսքային (բառային) համապատասխան միջավայրը: Օրինակ՝

Հո գիտեք, ասավ, ես էլ խղճի տեր,

Զեմ ուզում ընկնեմ արինն էդ տըղի... (ՀԹԵ, 2, 41):

Բայց խո ամեն մարդ այսպիսի պայման չէր կապում ուստա Սիմոնի հետ (ՀԹԵ, 1, 290):

Թե չը լինի ու սուտ դուրս գամ,

ես հո էստեղ միշտ կամ ու կամ... (ՀԹԵ, 1, 242):

Գուցե, միգուցե, չլի՛նի/թե/, իցե/թե/, չիցե/թե/ բառերը հիմնականում արտահայտում են կասկած, երկբայություն, ինչպես՝ «էդ ժամանակ, ինչպես եղավ, նրանցից մինը, գուցե ամենից անզգույշը կամ ամենից սովածը, շտապեց, ավելի դուրս ձգվեց բնից ու ընկավ ներքև» (ՀԹԵ, 1, 355): «Իցե թե վախենում են հայտնել ճշմարտությունը» (ՍԶՎ, 126): «Զրցե ձեր մասին բողոքավոր լինի Թեհրանում» (ԲԵԺ, 2, 234): «Եթե մերայինք ֆեյսին՝ իցե համաձայնեին, իցե մերժեին կամ հարմար համարեին մի այլ թեկնածու...» (ՍԶՎ, 15):

Զը լի՛նի՞ թե, հաղթահարված,

ճարը հատած թշնամին

Դավ է դնում մոլթն ու մեռած

Կես գիշերվա էս ժամին (ՀԹԵ, 1, 142):

Այս առումով հարկ է նշել հետևյալը՝

ա) Գուցե, միգուցե, չլի՛նի/թե/, իցե/թե/, չիցե/թե/ բառերը, գործածվելով համապատասխան խոսքում, հաճախ ենթադրում են կամ, կամ թե, կամ թե չէ տրոհական շաղկապների առկայությունը:

բ) Իցե/թե/, չիցե/թե/ բառերը ժամանակակից հայերենում գործածական չեն (կամ զուտ գրքային են): Ուսումնասիրությունները վկայում են, որ քննարկվող վերաբերականները երբեմն էլ գործածվում են հարցական իմաստով՝ հաճախ հենց իրենք կամ նախադասության (շրջուն շարադասություն) համապատասխան անդամը կրելով հարցական նշան: Ընդ որում, այդ բառերի հարցական երանգն ավելի է ընդգծվում, երբ նախադասության մեջ առկա է լինում ուղղակի հարցումը, որին հետևում է պատասխանը: Օրինակ՝

Հը՞, չլի՛նի՞ թե բարկանում ես...

— Զէ, ո՞վ է բարկանում... (ՀԹԵ, 1, 453):

— Միգուցե գրպանդ ես դրել լուցկին. լավ նայի՛ր:

— Զէ, նայել եմ, չկա:

Մի՞թե և աղդյո՞ւմ բառերը ավել կամ պակաս չափով արտահայտում են հարցական իմաստ, տարակուսանք, որին հաջորդում է պատասխանը, իսկ դա նշանակում է, որ այս (և ուրիշ) բառերը կազմում են վերաբերականների ինքնուրույն տեսակ: Ըստ Գ. Զահուկյանի «հարցական աղդյո՞ւմ, մի՞թե բառերն ունեն զուտ հարցման արժեք և փաստորեն փոխարինում են հարցական առոգանությունը՝ գնում է մի՞թե գնում է»<sup>10</sup> (ընդգծումը հեղինակինն է—Վ. Ա.):

Հարցական վերաբերականներն ինքնուրույն տեսակ ընդունում են նաև Ա. Աբրահամյանը<sup>11</sup> և Ա. Քյուրքչյանը<sup>12</sup>, Բերենք օրինակներ նշված հարցական վերաբերականներով՝

— Մի՞թե, հայրի՛կ, ինձ մոռացան,

էլ չեն բերի հուրն անշեջ,

10 Գ. Զահուկյան, Հայոց լեզվի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 376:

11 Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1953 (և հետագա հրատ.):

12 Ա. Քյուրքչյան, նշվ. դիս. աշխ.:

— Ո՛ր, իմ դստրիկ, կըգան անշուշտ  
Ու կրբերեն էս տարի... (ՀԹԾ, 2, 227):

— Նա քեզ հետ արդյո՞ք խոսել է այդ մասին:

— Այո՞, իհարկե խոսել է:

Այժմ երկու խոսք մի՞թե և արդյո՞ք բառերի կասկածական իմաստային նրբերանգի մասին: Հայտնի է, որ հարցական նրբերանգները լինում են ուղղակի, ճարտասանական և այլն: Ծարտասանականը ձևով հարցում է արտահայտում, մինչդեռ բովանդակությամբ՝ յուրահատուկ հաստատում: Ահա այս երևույթն էլ հիմք է տալիս մի՞թե և արդյո՞ք բառերի կասկածական նրբերանգի համար, որը գործածական է հատկապես մենախոսության (ինքնահարցման) մեջ: Օրինակ՝ «Արդյո՞հ հիշե՞ց նա իր մորը սգավոր» (ՎՏԾԺ, 2, 117):

Մի՞թե վերջին պոետն եմ ես,  
Վերջին երգիչն իմ երկրի,  
Մա՞հն է, արդյոք, թե նինչը քեզ  
Պատել, պայծա՛ր նախրի (ՎՏԾԺ, 1, 249):

Ախր (ախար) բառը զղջական, ափսոսանքի, ցավակցման նրբիմաստ ունի, ինչպես՝

— ...Ախր էդ ո՞նց էլավ:

— Էլավ, էլի... (ՀԹԾ, 1, 283):

— Այ՛ր որգի, ախր ոտներդ կքամոտի, ախր հորդ օրը կընկնես (ՎԱԼՀ, 2-է):

Ախր (ախար) բառն արտահայտում է նաև հաստատական որոշ նրբերանգ: Ի դեպ, Ս. Մալխասյանը գրում է, թե այդ բառը տաճկական փոխառություն է, որ «գործ է ածվում ընդդիմության մեջ՝ ապացուցական խոսքի սկզբին. ախր, ապաքեհ, չէ՞՞՞ր իմաստով»<sup>13</sup>: Օրինակներ՝ «Ախր չէ՞՞՞ր նա էլ մեզ նման շուռչ կենդանի ա, հրեն կես գիշերին էրվելով գոռում ա, ձեն ա տալի, իր կովին կանչում, չէ՞՞՞ էն էլ նրա սերն ու մուրազն ա» (ՀԹԾ, 1, 359): «Ախար ամեն մեկն ունի իրավունք / Գոնե մի սնգամ իր կյանքում հաղթելու» (ՊՍԾԺ, 6, 85):

Ինչ խոսք, ախր (ախար) բառի հաստատական նրբիմաստը ևս պայմանավորված է բառային (խոսքային) շրջապատով:

Առանձնապես, հատկապես, ճիմնականում, մասնավորապես (մասնավորաբար), գերազանցապես, առավելապես մակբայները ցույց են տալիս հատկանիշի չափն ու աստիճանը: Հենց այս իմաստից էլ ածանցվել է մի այլ իմաստային նրբերանգ՝ սահմանավաճումը կամ, այսպես ասած, «կրկնակի սահմանափակմանը»՝ սաստկակալը: Թերևս սա է պատճառը, որ որոշ լեզվաբաններ սահմանափակման (և սաստկական) վերաբերականների և բուն իսկ վերաբերականների միջև ինչ-ինչ տարբերություններ են նկատում: Գ. Ջահուկյանն իրավացիորեն գրում է. «Ճարագործառական բառ-մասնիկները, ինչպես նշվել է, հիմնականում եղանակային արժեք ունեն և կարող են ուղեկցել բառակապակցությունների և նախադասությունների բոլոր անդամներին՝ անկախ խոսքիմասային պատկանելությունից, այսինքն՝ կարող են դրվել և՛ գոյականների, և՛ ածականների, և՛ մակբայների, և՛ բայերի վրա՝ սաստկական կամ սահմանափակման իմաստով»<sup>14</sup>: Նշենք, սակայն, որ սաստկական ու սահմանափակման իմաստները, ունենալով մերձավոր առնչություններ, միշտ չէ, որ կարող են իրար ձածակել, այսինքն՝ սաստկական իմաստ ունեցող վերաբերականները ավելի են շեշտում, ընդգծում, սաստկացնում համապատասխան բառիմաստը (նախադասության անդամը), քան թե սահմանափակման իմաստ արտահայտող բառերը: Պատահական չէ, որ դրանք իմաստային տարբեր տե-

<sup>13</sup> Ս. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1944—1945, էջ 19:

<sup>14</sup> Գ. Ջահուկյան, Նշվ. աշխ., էջ 381:

սականքը են համարվել: Այն էլ ասենք, որ քննարկվող բառերը, դրվելով բայ-ստորոպալների վրա, ցուցաբերում են մակրայական հատկանիշ և սահմանափակման իմաստ (վերաբերական), իսկ առարկայանիշ ու հատկանշացույց բառերի վրա դրվելիս՝ ավելի շատ սաստկական (գուցե և սաստկական-սահմանափակման) իմաստ: Այս երևույթն ավելի ակնհերե է դրսևորվում հատկապես որոշակի նախադասություններում: Օրինակ՝ «Այդ բանում առանձնապես համոզվեցին ռուսական հեղափոխականության տատան» ու «պապը» (Ս. Գր., էջ 3): «Նա հայտնում էր առանձնապես Ռոստոմին տասնյակ փողոցային կեդրոտ խոսքերով» (ՇՆԼԺ, 337): «Մասնավորապես սրտառու էր քահանայապետի խոսքը և սփոփիչ ըստ ամենայնի» (ՍԶՎ, 5): Արութ ապոր գեղդաստանից գերազանցապես տղաներն էին մնացել Վանում, մասնավորապես ինքն էր տուժել, մյուս հարազատները փախել էին արտասահման:

Ընդգծված բառերի մակրայական արժեքը հեշտ որոշելու համար տրվում են այդ խոսքի մասին բնորոշ հարցեր (ինչքա՞ն, որքա՞ն, ի՞նչչափ...): Իսկ սաստկականն ու սահմանափակմանը առանձնապես տարբերվում են որոշակի խոսքում, ընդ որում, հատկապես գոյականների, ածականների ու դերանունների վրա դրվելով՝ դրանք ավելի շատ սաստկական երանգ են արտահայտում, քան սահմանափակման:

Իսկի-ն իսկ երբեմնի գոյականից ու ածականից առաջացած բառ է, որն ունի և՛ մակրայական, և՛ եղանակավորող իմաստներ: Որպես մակրայ՝ իսկի-ն ցույց է տալիս գործողության կատարման չափն ու աստիճանը, ինչպես՝

— Այ գալի, մեր տունն էն ա հա՛,— ցույց տվավ Գիքորը՝ մատր մեկնելով դեպի պուլը, թեև տունը իսկի չէր երևում, ու անցան (ՀԹՆ, 1, 313):

Դժվար չէ նկատել, որ իսկի-ն համարժեք է բոլորովին, բնավ, ամենեկին բառերին (մակրայներին): Հարկ է նշել, սակայն, որ իսկի-ն որոշակիորեն ցուցաբերում է նաև սաստկական իմաստ (հատկապես էլ բառ-մասնիկի զուգորդմամբ): Օրինակ՝ «Բայց որ հարցնես՝ իսկի մեկը մտնո՞ւմ է պատարագ անելու, երեսը խաչակնքելու, մոմ վառելու, աղոթք անելու» (ՆԴՊ, 15): «— Իսկի մարդն էլ չի էդ բանին հավանիլ,— համաձայնեց Գոքորը» (ՀԹՆ, 1, 285): Թեև սակավ գործածությամբ, այդուհանդերձ, իսկի-ն կիրառվում է նաև որպես ժխտական վերաբերական՝ հատկապես երկխոսություններում: Օրինակ՝

— Դու միտք ունես գյուղից հեռանալ, հա՞:

— Իսկի՛:

Հաստատական վերաբերականները երկխոսություններում կարող են դառնալ ինքնուրույն նախադասություններ (բառ-նախադասություն)<sup>15</sup>, իսկ դրվելով նախադասությունների վրա, կատարում են միջանկյալ բառերի դեր: Ինչպես՝ Այո՛, մենք խաղաղասեր ժողովուրդ ենք: «Անկասկած, նա ուրիշ ոչինչ է, եթե ոչ ճակատագրի մի խաղալիք» (ՇՆԼԺ, 442): «Նվ իրավ, գինին կնոջ պես է ինձ խաբում» (ՇՔՀ, 2, 32): «Արդարե՛ւ տուն դառնալուց հետո՝ մի որոշ ժամանակ հետո վարպետ Պետրոսին ծնվում է մի աղջիկ, որի անունը դնում է Մալբի» (ԲԾԺ, 2, 88): Մինչդեռ նույն բառերը, դրվելով նախադասության այս կամ այն անդամի վրա, զրկվում են միջանկյալ բառի դերից և ձեռք բերում առավելապես սաստկական իմաստ, հարում սաստկական երանգավորող բառերին<sup>16</sup>: Օրինակ՝ Նրա ճիրավի՛ր՝ գեղեցիկ կեցվածքը շատ ներդաշնակ էր անաղարտ ու շիտակ բնավորությանը: Հասմիկն իրա՞՛ն ազնվագույն աղջիկ էր: Նա իրա՞՛ն մարդ է՝ բառիս ամենախոր՛ իմաստով:

15 Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շփեզվող խոսքի մասերը, Երևան, 1959, նույն ի՛ Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 2, Երևան, 1964, Ս. Գյուլբուրդյան, Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967, Վ. Ավագյան, նշվ. աշխ.:

16 Վ. Ավագյան, նշվ. աշխ., էջ 74—75, նույն ի՛ Շարահյուսություն, Երևան, 1933:

Հապա (հ+ապա) բառն ունի կամային իմաստ, ինչպես՝

— Հապա ո՞ր ես եկել (ՇԹԵ, 1, 298);

— Ո՞ր է հապա (ՍԶՎ, 297);

Նրբեմն էլ պատահում է, որ այս բառը իմաստով մերձենում-ձուլվում է բա-ին՝ որպես հաստատական վերաբերական: Օրինակ՝

Եվ անգամ շունը

Չի կարողացել ինձ ուտել, հաբա՛ (ՊՍԾԺ, 6, 136);

Ի դեպ, հատկապես Կարնո բարբառում այդ բառը հանդես է գալիս հնչափոխված՝ հրբը տարբերակով՝ գործածվելով մասնավորապես երկխոսություններում (ափելացնենք, որ սխալ չէ կարծել, թե դա հա+բա բառերի միասնությունն արդյունք է):

Իսկեխիսկ բառը հիմնականում սաստկական վերաբերական է: Օրինակ՝ «Իսկեխիսկ իմ ասածն է» (ՇԵԼԺ, 421):

Դժվար չէ նկատել, սակայն, որ այդ բառի մեջ հաստատական իմաստ էլ կա: Ըստ Աճառյանի այն ունի մի շարք նրբախմբեր՝ 1. «էություն, բուն գոյություն», 2. «էական, բուն, հարազատ», 3. «սակայն, բայց, ապա ուրեմն, արդ», 4. «էլ, արդեն, իրօք էլ, ընսպես», «նաև թարմատար—ադդէն իսկ» և այլն<sup>17</sup>: Հարցը գրեթե նույն ձևով է մեկնաբանել նաև Ս. Մալխասյանը<sup>18</sup>, Ս. Աբրահամյանն իսկ և իսկ բառը համարում է սոսկ հաստատական վերաբերական՝ բերելով բնագրային հետևյալ օրինակը՝ «Իսկ և իսկ, հենց այդպես եղած կլինի»<sup>19</sup>, Կառծում ենք, որ այդ բառը գերազանցապես սաստկական վերաբերական է, իսկ առանձնապես երկխոսություններում կիրառվում է նաև հաստատական իմաստով:

Սահմանափակման տեսակին պատկանող լոկ, գեթ, գոնե (գոնյա), միայն, միմիայն, միայն և միայն, մենակ (ժողովրդախոսակցական), սոսկ, զուտ, հատկապես բառերը երբեմն էլ այնքան են մոտենում սաստկական իմաստ արտահայտող վերաբերականներին, որ իրոք դժվարանում են դրանք դասադասել: Օրինակ՝ «Արևի տակ սոսկ մի օր է լինելու, որ ինձ համար բախտավոր է լինելու...» (ԱԻԾ, 1, 385): Ես միմիայն քեզ եմ մեղադրում, ուրիշ ոչ ոքի: «Դու լոկ Չարենց ես, միայն Չարենց» (ԵԶԸԾ, 84): «Գոնե միայն այսքան ոսկեղենների կեսն ունենալի» (ՇԵԼԺ, 28): Հատկապես ի՞նձ դուր եկան այդ նկարները, որ վեհոքն շուք էին տալիս ամբողջ պատկերասրահին: Ընդգծված բառերի սաստկական իմաստը համեմատաբար հեշտ է տարբերակվում, երբ դրանք դրված են լինում հատկապես հատկանշացույց ու առարկայանիշ բառերի վրա: Ընդ որում, այդ պարագայում կամ իրենք են շեշտ կրում, կամ այն բառը, որի վրա դրվել են: Ընդ որում, թվականների ու բայերի վրա դրվելով՝ այդ բառերը ավելի շատ սահմանափակման տեսակին են հարում:

Դիցու՛ք /թե/, օրե՛նակ (գործօրինակ), ադդ վերաբերականները, հանդես գալով նախադասությունների սկզբից, ցուցաբերում են մի տեսակ մեկնական իմաստ, այսինքն՝ նդանցից հետո բերվում է ողևէ ապացույց՝ փաստ: Ինչպես՝ Ադդ՝ հինգը մեծ է չորսից, բայց քանի՞ միավորով է շատ: «— Օրե՛նակ՝ ի՞նչ են ասում սուրբ տված ժամանակ, այդ շատ հետաքրքրական է...» (ՄԵ, գ. Բ, 64): Դիցու՛ք՝ Արևը ոսկեգոծ ճառագայթներով ողողել է աշխարհը. վերլուծել այս նախադասությունը շարահյուսորեն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված բառերը երբեմն էլ հանդես են բերում զիջական ու անշատական-լրացական (բուն միջանկյալ) բառերին հատուկ նրբախմբեր: Այսպես. Ջուզահեռ ուղիղները, դիցու՛ք, մի կեսում հասնում են ի՞նչ է հետևում դրանից:

Եվ ի՞նչ, և ի՞նչ, և ի՞նչ. ի՞նչ խոսքերով ասել

Նրա մասին, որ, ադդ, իր կրակով

17 Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 249:

18 Ս. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, էջ 120:

19 Ս. Աբրահամյան, Զբոսովող խոսքի մասերը..., էջ 516:

Հրկիզում է ըուրը, ըուրը նրանց,

Որ ապրում են այս խեղճ հողագնդի վրա (ՊՍԵԺ, 6, 19):

«Այսպես, օրինակ, նա անշուշտ խորապես սխալվել է, որ ստրատեղիայի դին հանձնել է հարազատներին...» (ՍԶՎ, 212): Ընդգծված բառերից դիցուիք-համարժեք է ինչևէ, ասեմք թե և զիջական իմաստ ունեցող այլ բառերի, իսկ արդ-ը և օրինակը՝ ի դեպ, իմիջիպալոց, քնդսմին բառերին:

Ի մի բերելով վերն ասվածը՝ նշենք, որ ժամանակակից հայերենում մի շարք վերաբերականներ ցուցաբերում են տարիմաստություն: Հանգես գալով համապատասխան նախադասությունների մեջ՝ նրանք իմաստային որոշակիություն են ձեռք բերում այդտեղ: Ընդամին՝ վերաբերականների տարիմաստությունը պայմանավորված է մի կողմից՝ հենց տվյալ բառի ներգործությամբ, մյուս կողմից՝ յուրահատուկ բառերի շրջապատով: Վերաբերականների տարիմաստությունը, սակայն, չի սահմանափակվում վերը նշված բառերով: Կան նաև այլ վերաբերականներ, որոնք ունեն այս կամ այն տեսակին բնորոշ իմաստներ, իսկ տարիմաստությունն այլևայլ նրբերանգներով, բնականաբար, կորսվողով լեզվի զարգացման հետագա շրջանում:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻՆ—Ավետիք Իսահակյան, Երկեր, հ. 1, Երևան, 1958:

ԵԶԸՆ—Եզիշե Զարենց, Ընտիր երկեր, Երևան, 1954:

ՀԲԵ—Հովհաննես Բումանյան, Երկեր, հ. 1—2, Երևան, 1958:

ՀԵՔԸ—Հովհաննես Շիրազ, Քնար Հայաստանի, հ. 2, Երևան, 1964:

ՀԾԵ—Հովհաննես Շիրազ, Երկեր, հ. 2, Երևան, 1982:

ՀԼԴ—Հրանտ Մաթևոսյան, Օգոստոս, Երևան, 1967:

ՄԵ—Մուրացան, Երկեր, Գիրք Բ, Երևան, 1970:

ՄԵԺ—Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1953:

ՆԴՊ—Նար-Դոս, Պայքար, Երևան, 1957:

ՇԵԼԺ—Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1950:

ՊՈԺԺ—Պարույր Սեակ, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1975:

ՍԶԼ—Ստեփան Զորյան, Վարազդատ, Երևան, 1967:

Ս. Գր.—«Սովետական գրականություն», 1967, № 3:

ՎԱԼԸ—Վախթանգ Անանյան, Լեռների հայրենի, Երևան, 1963:

ՎՏԵԺ—Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, 2, Երևան, 1972, 1973:

ԴԵԺ—Դաֆֆի, Երկերի ժողովածու, Երևան, 1962:

## ОБЩИЕ МОДАЛЬНЫЕ СЛОВА В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ВИГЕН АВАКЯН

### Резюме

В современном армянском языке есть ряд модальных слов, выражающих разные смысловые оттенки: բա, բաւ, հա, էի, լէ, այո, հո, խոմ, խո, չիի (թե), իցե (թե), գուցե, միգուցե, ասինք (թե), ախր, դիցուք, օրինակ, միթե, արդյոք, իսկիսկ, հապա... Они называются общими модальными словами. Их разная смысловая значимость обусловлена, с одной стороны, смысловыми потенциальными свойствами этих слов, с другой—кон-текстом, в котором они появляются.